ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 96-Ա/13 «24» 03 2025թ.

«ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ -ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված փոշեկուլների գնման գործընթացին հայտ ներկայացրած «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ-ի փաստաթղթերը անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն տալուց հետո կրկին չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող մոդելի հզորությունը ներկայացվել է 2300Վտ, ինչը չի համապատասխանել իրականությանը, քանի որ նշված մոդելի հզորությունը 600Վտ է, ինչի արդյունքում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն, գնահատող հանձնաժողովը 12.03.2025թ որոշմամբ մերժել է վերջինիս հայտը, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06972027, գործունեության հասցեն՝ Լոռի, Արջուտ) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3/24/2025

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**